խախտումներ, նոր կարելի է անդրադառնալ պատասխանողի կողմից թույլ տրված ընթացակարգային և տեխնիկական բնույթի խախտումներին, իսկ դրանք վեր հանելուց հետո էլ նոր անդրադառնալ այն հարցին, թե արդյոք արձանագրված խախտումները կարող են հանգեցնել վիճարկվող իրավական ակտի անվավերության թե ոչ: Հանգամանքների բացահայտման նշված հաջորդականությամբ առաջնորդվելու պարագայում էլ, Դատարանը ինչպես հիմնավորեց վերոգրյալում, հայցվորի կողմից խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որն էլ հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, հետևաբար, ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարը կայացրել է որոշում՝ <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանն արձանագրում է, որ հայցվորի կողմից օրենքով սահմանված չափով վճարված է պետական տուրքի գումարը, իսկ բռնագանձման ենթակա այլ դատական ծախս, սույն գործով, առկա չէ, ուստի գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-192-րդ, 234.12-րդ հոդվածներով

4. <u>Եզրափակիչ մաս.</u>

ՎՃՌԵՑ

1. <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ դատախազության՝ 18.01.2024թ. ամսաթվով թվագրված ՀՀ դատախազության գլխավոր քարտուղարի <<Սիգմա Էլեկտրոնիքս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:
2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱՐՏՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ